ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 382
*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի
*ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքը (Գեղի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*
*(Քաջարան համայնքի (Գեղի բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-իդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքը (Գեղի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| | |
|---|---|
| ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի (Գեղի բնակավայրի)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
| 09-026-0103-0005 կադաստրային ծածկագրով հողամասից 1,8212 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք | 09-026-0103-0005 կադաստրային ծածկագրով հողամասից 1,8212 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների գրություններով ներկայացված պահանջները (կցվում են):

4. Քաջարան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Գեղի բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի (Գեղի բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | |
|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | |
| | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | |
| | Լ.Առաքելյան |

Երևան, «28» «նոյեմբերի» 2025 թ.